

1000 գյուղի փրկությունը՝ Սփյուռքի ներդրման շնորհիվ

ԵՐԵՎԱՆ, 22.09.2017 Թ. – «20 ՄՄԱԸԹ կենտրոն կառուցելու համար անհրաժեշտ է 200 միլիոն դոլար: Կան մեծահարուստ հայեր, ում գրպանի համար սա մեծ գումար չէ, բայց այդ 200 միլիոնը կարող է գյուղերի հայության փրկությունը լինել»:

Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) հիմնադիր և խորհրդի ատենապետ, դոկտոր **Գարո Արմենը** ելույթ է ունեցել «Փոխադարձ վստահություն, միասնականություն և պատասխանատվություն» խորագրով Հայաստան-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի ընթացքում:



Անդրադառնալով Հիմնադրամի 13-ամյա գործունեությանը՝ դոկտոր Արմենը նշել է, որ գյուղերում COAF-ի գործունեությունն ինքնանպատակ չէ: Նկատելով, որ երեխաները շատ բարձր ունակություններ ունեն, բայց չունեն ռեսուրսներ, Հիմնադրամը երեխաների համար մուտք ապահովեց այդ ռեսուրսներին: 44 գյուղում բարձր արդյունավետությամբ աշխատելով՝ այսօր

Հայաստանի մանուկներ հիմնադրամը վերանայել է ռազմավարությունը. պետք է գործը հասցնել Հայաստանի բոլոր 1000 գյուղեր:

Նպատակը մեկն է՝ արագացնել գիտելիքի փոխանցումն ու կրթությունն ապահովել տարբեր ոլորտներում, որ թափ առնի գյուղական համայնքների առաջընթացը:

«Նոր մոդել ենք ստեղծել, որ կոչվում է ՄՄԱԸԹ: Աշխատասիրությունը բավական չէ. պետք է խելացի ձևով աշխատենք: Հենց այդ նպատակով է, որ առաջիկա 10-15 տարվա ընթացքում ՄՄԱԸԹ կենտրոնների միջոցով ուզում ենք հասնել բոլոր գյուղեր»:



Գարո Արմենը համոզված է, որ ՄՄԱԸԹ նախաձեռնությունը կարող է լինել գյուղում աճող սերնդի փրկությունը: *«Հաջողելու համար մի քանի բանի կարիք կա. գումարը կարևոր է: Բացի այդ, մենք պետք է տարածենք աշխարհում բոլոր բնագավառներում լավագույնը՝ կրթություն, ուսում, առողջապահություն և այլն: Ոչ միայն հայկական լավագույնը, այլև համաշխարհային: Սա է զարգացումը: Դյուրին գործ չէ, բայց հնարավոր է»:*



* * *

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների ավելի քան 67,000 բնակիչները:

2015 թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՄՄԱԸՍ նախաձեռնություն: ՄՄԱԸՍ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՄՄԱԸՍ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում: